# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի<br>տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | ՀՀ դրոշ (1.5x3մ)՝ եռագույն, վերևից ներքև ձգվող կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով, 100% պոլիէսթերային գործվածքից, գործվածքի խտությունը՝ ոչ պակաս 90 գ/մ2-ից: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունը պետք է լինի 1:2-ի: Դրոշի երկարության և լայնության շեղումը չպետք է գերազանցի ±2%-ը: Դրոշի պաստառի եզրերը պետք է մշակված լինի երեսակողմից չերևացող զարդակարով, որից հետո՝ 0,3-ից մինչև 1,0 սմ լայնությամբ փակ կարվածքով (հարթակարով): Կարը պետք է լինի ամուր, ուղիղ, կարի ծայրերը պետք է ամրացված լինեն հետադարձ կարով՝ 0,7 սմ ոչ պակաս երկարությամբ: Դրոշը պետք է կարված լինի շերտի գույնի կամ թափանցիկ կարի թելերով: Երեք շերտից կարված դրոշը պետք է կցակարված լինի տարբեր թելերով՝ վերևի և ներքևի շերտերի գույներին համապատասխան: Դրոշի ամրացման եղանակը՝ եզրակի օգնությամբ: Եզրակի լայնությունը՝ 3,0–ից մինչև 3,5 սմ: Բոլոր թելերը պետք է լինեն ջերմակայուն և ջրակայուն: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ * Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը: ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված, առանձին փաթեթավորված՝ փաթեթավորման միավորի վրա պետք է փակցված լինի պիտակ, որը պետք է պարունակի արտադրատեսակի անվանումը և դրա չափերը: *** Դրոշները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության պետական դրոշի ՀՍՏ 50-2012 ստանդարտի պահանջներին: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
| --- | --- |
| | технические характеристики |
| 1 | - |